ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 153

<<05>> <<08>> 2014թ. գ. Արտաշատ

ԽԱՉԻԿ ԳԵՂԱՄԻ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի ա. ենթակետի պահանջով.

Մինչև <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գետազատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի նշանակվելը 2014 թվականի օգոստոսի 5-ից այդ կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Խաչիկ Գեղամի Արիստակեսյանին:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 154

<08> 08 2014թ.

ք. Արտաշատ

<<ԴԱՐԱԿԵՐՏԻ ԱԱՊԿ>> ՓԲԸ-ՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի 2014 թվականի տարեկան ծրագրով.

1. «Դարակերտի ԱԱՊԿ» ՓԲԸ-ում սույն թվականի օգոստոսի 11-ից մինչև օգոստոսի 15-ը՝ 5 աշխատանքային օր, իրականացնել ներքին աուդիտ:
2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել «Դարակերտի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի կողմից 2011, 2012 և 2013 թվականների ընթացքում իրականացրած ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախահաշիվներով հաստատված և կատարված փաստացի ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:
3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նելլի Սիմոնյանին՝ կատարել գործուղման ծախսերի վճարում:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 155

<08> 08 2014թ.

ք. Արտաշատ

ՍԱՀԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆՈՒՄ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Քաղաքացիական ծառայության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 2-րդ մասի ,,դ,, կետով և 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002թվականի հունիսի 13-ի ,, Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին,, թիվ 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացնող մրցութային հանձնաժողովի 2014թվականի օգոստոսի 6-ի եզրակացությունը և Սահանուշ Հովհաննիսյանի դիմումը՝

1. Սահանուշ Հովհաննիսյանին 2014թվականի օգոստոսի 8-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալի /ծածկագիր՝ 62- 1.2-1 / պաշտոնում:

2. Աշխատավարձը՝ "Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան :

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 156

<08> 08 2014թ.

ք. Արտաշատ

ՀԱՄԼԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Քաղաքացիական ծառայության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի ,,բ,, կետով, և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004թ. մայիսի 31-ի ,,Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին,, N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետի ,,դ,, ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2014թ. օգոստոսի 2-ի N 01/13/5/2805-14 գրությունը՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր՝ 62-3.1-19/ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Համլետ Հայկազի Ավետիսյանի հետ 2014թ. օգոստոսի 8-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 157

«08» 08 2014թ.

ք. Արտաշատ

ՍՈՒՐԵՆ ՔԱՐԱՄՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆՈՒՄ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Քաղաքացիական ծառայության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 2-րդ մասի ,,դ,, կետով և 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002թվականի հունիսի 13-ի ,, Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին,, թիվ 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացնող մրցութային հանձնաժողովի 2014թվականի օգոստոսի 7-ի եզրակացությունը և Սուրեն Քարամյանի դիմումը՝

1. Սուրեն Քարամյանին 2014թվականի օգոստոսի 8-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի /ծածկագիր՝ 62- 2.2-28 / պաշտոնում:

2. Աշխատավարձը՝ "Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան :

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 158

<08> 08 2014թ.

ք. Արտաշատ

ԳԵՂԱՄ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ
ՄԱՐԶՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

1. Գեղամ Հայկազի Մուրադյանին 2014 թվականի օգոստոսի 8-ից նշանակել մարզպետի օգնական:

2. Աշխատավարձը՝ ըստ դրույքաչափի:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ